



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(66), 2014

ՏԱՎԱՐԻ ԱՆԱՊԼԱԶՄՈԶԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Հ.Զ. ՆԱՂԱՇՅԱՆ, Վ.Լ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
vsamsonyan@gmail.com

Հայաստանի տարբեր մարզերում 2012-2013 թթ. կատարված հետազոտություններով պարզվել է, որ տավարի անապլազմոզը տարածված է ինչպես խոշոր, այնպես էլ մանր անասնապահական տնտեսություններում: Հիվանդության բնկումներ արձանագրվում են գարնան, ամռան և աշնան ամիսներին: Կատարված տվյալների հետազոտությունները ցույց տվեցին, որ արոտավայրերը վարակված են արյան մակաբուծային հիվանդությունների հարուցիչներ՝ մասնավորապես անապլազմաներին, փոխանցող արոտավայրի տզերով:

Տավար – անապլազմոզ – արյուն – մակաբույծ – տիգ

Исследования, проведенные в разных регионах Армении в течение 2012-2013 гг., показали, что анаплазмоз крупного рогатого скота распространен как в крупных, так и в мелких животноводческих хозяйствах Армении. Вспышки болезни регистрируются в весеннее, летнее и осеннее время года. Проведенные исследования клещей, собранных с внешних пастбищ животных, показали, что пастбища инфицированы клещами – переносчиками гемоспоридиозов, в частности анаплазмоза крупного рогатого скота.

Крупный рогатый скот – анаплазмоз – кровь – паразит – клещ

Investigations conducted in 2012-2013 in various provinces of Armenia show that the anaplasmosis of cattle is spreaded both in large and in small breeding farms. Disease flares were being recorded in spring, summer and in autumn. The investigations of speices of ticks have shown that pastures are infected with pastural ticks, which are transferring anaplasmas, which are germs of parasitic diseases.

Cattle – anaplasmosis – blood – parasite – tick

Տավարի արյան մակաբուծային հիվանդությունները տարածված են բազմաթիվ երկրներում: Հայտնի է, որ տավարի արյան մակաբուծային հիվանդությունները տարածված են նաև մեր երկրում, և խոչընդոտում են ճյուղի զարգացմանը: Այդ հիվանդություններից առաջացած կորուստները բաժանվում են երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի կորուստները առաջ են գալիս կենդանիների մթերատվության նվազումից և երբեմն դրանց անկումներից: Իսկ անուղղակի կորուստները առաջանում են կարանտինային միջոցառումներից, տզերի դեմ պայքարից, կանխարգելիչ և հարկադրված վակցինացումներից և անասնապահության վարման սահմանափակումից:

Բազմաթիվ հետազոտություններ են կատարվել արյան մակաբուծային հիվանդությունների առանձնահատկությունների բացահայտման վերաբերյալ՝ նրանց տարածվածության ու տարածման, փոխանցման, հարուցիչների բազմացման և այլն, սակայն կան բազմաթիվ հարցեր, որոնք նույնպես կարիք ունեն հետազոտության և պարզաբանման [1, 3, 6, 8]: Տավարի արյան հիմնական մակաբուծային հիվանդություններն են՝ բաբեզիոզը, թեյլերիոզը և անապլազմոզը [1]:

Ելնելով վերոհիշյալից, աշխատանքի նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության տարբեր բնակլիմայական և աշխարհագրական գոտիներում վերջին տարիներս մեծ բնկումներով ի հայտ եկող տավարի արյան մակաբուծային հիվանդություններից՝ անապլազմոզի տարածվածությունը:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2012 թ. հունիսից մինչև 2013 թ. սեպտեմբերը Կոտայքի մարզի Փյունիկ, Ակունք գյուղերի մանր գյուղացիական տնտեսություններում, Բալախովիտ գյուղում ՀԱԱՀ-ի ուսումնագիտահետազոտական տնտեսությունում, Տավուշի մարզի՝ Կիրանց գյուղի, Շիրակի մարզի՝ Հովիտ գյուղի մանր գյուղացիական տնտեսություններում, Արարատի մարզի Այնթապ ու Ոստան գյուղերում և Արմավիրի մարզի Արևիկ գյուղում: Հետազոտությունների ժամանակ հաշվի են առնվել կենդանիների պահվածքի տիպը, հակամակաբուծային միջոցառումների անցկացման առկայությունը և այլն:

Ուսումնասիրությունների ընթացքում կենդանիների վրայից հավաքվել են նաև արյան մակաբույծների կենսաբանական փոխանցողներ հանդիսացող՝ արոտավայրային տզերը, և որոշվել է դրանց սեռերը և տեսակները [1, 4, 7, 9]:

Կենդանիների մոտ հիվանդությունը ախտորոշվել է համաճարակաբանական տվյալների, կլինիկական նշանների և արյան մակաբուծային հիվանդությունների հայտնաբերման լաբորատոր եղանակի, մասնավորապես քսուքների Ռոմանովսկու-Գիմզայի [10, 11] ներկման ու մանրադիտակային ուսումնասիրման հիման վրա:

Համաճարակաբանական տվյալներից կարևոր էին կենդանիների վրա անապլազմաների կենսաբանական փոխանցողների՝ արոտավայրային տզերի առկայությունը, տարվա եղանակը, տեղումների քանակը, արոտավայրերի շահագործման վիճակը, դրանց հագեցվածությունը կենդանիներով և այլն [1, 5]:

Կլինիկական նշաններից հաշվի է առնվել. ախորժակը, որոճի և բիկոցների առկայությունը, տեսանելի լորձաթաղանթների գույնի փոփոխությունները, շնչառական շարժումները, մթերատվության անկումը և այլն [1, 3, 4, 9]:

Վերը նշված տնտեսությունների 89 խոշոր եղջերավոր կենդանիներից վերցվել ու հետազոտվել են արյան քսուքներ: Կոտայքի մարզից վերցվել է 43 արյան նմուշ, Շիրակի մարզից՝ 7, Տավուշի մարզից՝ 29, Արարատի մարզից վերցվել է 7 և Արմավիրի մարզից՝ 3 նմուշ: Բոլոր նմուշառված կենդանիները պահվում էին արոտային պահվածքի պայմաններում և գրեթե բոլորի վրա առկա էին *Ixodidae* ընտանիքին, *Dermacentor*, *Boophilus* և *Rhipicephalus* սեռերին պատկանող *Dermacentor pictus*, *D. marginatus*, *Boophilus calcaratus* և *Rhipicephalus bursa* տեսակների տզեր: Հայտնի է, որ այդ երեք տզերը հանդիսանում են տավարի անապլազմոզի հարուցիչների փոխանցողներ: Զուրք պատրաստելու նպատակով արյուն է վերցվել ականջային երակներից: Քսուքները ֆիքսվել են մեթիլ սպիրտի մեջ և ներկվել՝ Ռոմանովսկու-Գիմզայի եղանակով, ապա դիտվել են մանրադիտակի իմերսիոն օբյեկտիվով:

Արդյունքներ և քննարկում: 89 գլուխ տավարից վերցված և հետազոտված քսուքներից 13-ի մեջ հայտնաբերվել են անապլազմոզ հիվանդության հարուցիչները՝ անապլազմաները, որը կազմում է ընդհանուր գլխաքանակի 14.6 %-ը:

Կենդանիների վարակվածության ինտենսիվությունը ըստ մարզերի բերվում են աղ. 1-ում:

Աղյուսակ 1. Կենդանիների անապլազմոզով վարակվածության ինտենսիվությունը ըստ մարզերի

Մարզեր	Կենդանիներից վերցված արյան քսուքներ, գլուխ	Վարակված կենդանիներ, գլուխ	Վարակված կենդանիներ, %
Շիրակի	7	2	28.6
Տավուշի	29	6	20.7
Կոտայքի	43	5	11.6
Արարատի	7	-	-
Արմավիրի	3	-	-
Ընդամենը	89	13	14.6

«—» հիվանդ կենդանիները չեն հայտնաբերվել

Այսպիսով, վերլուծելով ստացված արդյունքները տեսնում ենք, որ ՀՀ-ում տարբեր կլիմայաաշխարհագրական գոտիներում կենդանիների անապլազմոզով վարակվածության ինտենսիվությունը տարբեր է: Ամենաբարձր մակարդակը ԽԵԿ-երի մոտ դիտվում է Շիրակի մարզում: Տավուշի մարզում ԽԵԿ-ի վարակվածության ինտենսիվությունը գերազանցում է Կոտայքի մարզի ցուցանիշին:

Ստացված արդյունքները վկայում են ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների անապլազմոզով վարակվածության բարձր մակարդակի մասին:

Կենդանիների անապլազմոզով վարակվածության բարձր մակարդակը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում գրեթե չեն իրականացվում կամ թերի են իրականացվում կենդանիների դեմ տզերի հարձակումներից պաշտպանելու միջոցառումները և չեն կատարվում այս հիվանդության նկատմամբ այլ կանխարգելիչ միջոցառումներ: Այդ տվյալները վկայում են նաև այն մասին, որ արոտավայրերը զանգվածաբար վարակված են արոտավայրային տզերով, որը կարող է պատճառ հանդիսանալ կենդանիների ինչպես այս հիվանդություննով վարակմանը, այնպես էլ ինվազիոն և ինֆեկցիոն մի շարք հիվանդությունների հարուցիչների փոխանցմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նաղաշյան Հ.Զ. Մակարածաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ: Երևան, 2003, 408 էջ:
2. Նաղաշյան Հ.Զ. Կենդանիների ինվազիոն հիվանդություններ: Լաբորատոր գործնական պարապմունքների ձեռնարկ: Երևան: ՀՊԱՀ, 2006, 248 էջ:
3. Акбаев М.Ш., Водянов А.А., Космиков Н.Е. и др. Паразитология и инвазионные болезни животных, под ред. Акбаева М.Ш. М., Колос, 743 с., 2000.
4. Акбаев М.Ш., Абуладзе К.И. Практикум по диагностике инвазионных болезней животных. М., Колос, 225 с., 1994.
5. Бакулов И.А. с соавт. Методические указания по Эпизоотологическому исследованию. М., 16 с. 1982.
6. Конспект лекций по ветеринарной арахно-энтомологии для студентов очной и заочной формы обучения. Сост. В.В.Микитюк. Белгород: Изд-во БелГСХА, 23с., 2005.
7. Померанцев Б.И. Иксодовые клещи (Ixodoidea). Фауна СССР. Паукообразные. Померанцев Б.И., М., Изд-во АН СССР., Вып.2., 223с., 1950.
8. Протозойные болезни сельскохозяйственных животных. Под ред. Н.И.Степановой. М., Колос, 1982.
9. Урххарт Г.М., Эрмур Дж. и др.: Ветеринарная паразитология. М., Аквариум, 366с., 2000.
10. Fleischer B. 100 years ago: Giemsa's solution for staining of plasmodia Tropical Medicine and International Health , 9, 7, pp. 755-756, July, 2004.
11. Giemsa G. Färbemethoden für malariparasiten. Centbl Bakt 31, 429, 1902.

Ստացվել է 20.12.2013